# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀԳԴ-ՀՄԱԱՇՁԲ-20/1

ք. Երևան «29» հոկտեմբերի 2020թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երկնաքեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Դրմոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ դատախազության մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **60 օրացույցային օր**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն **75** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 39780360 (երեսունինը միլիոն յոթ հարյուր ութսուն հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 6630060 (վեց միլիոն վեց հարյուր երեսուն հազար վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ դատախազություն | Երկնաքեր ՍՊԸ |
| ք.Երևան, Վ.Սարգսյան 5 | ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա |
| ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ. | ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900011035988 | Հ/Հ 1150010011101194 |
| ՀՎՀՀ 02506634 | ՀՎՀՀ 00414165 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«29» հոկտեմբերի 2020 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՀՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
### «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավ. գինը** | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **1-1. Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Մանրատախտակե հատակի քանդում | մ² | 508.0 | 300 | 152400 |
| 2 | Մարմարե սալերով հատակների քանդում | մ² | 108.00 | 2000 | 216000 |
| 3 | Մետլախե սալերով հատակների քանդում | մ² | 23.40 | 400 | 9360 |
| 4 | Միջնորմների քանդում | մ³ | 0.82 | 12000 | 9840 |
| 5 | Փայտե պատուհանների քանդում | մ² | 97.00 | 2200 | 213400 |
| 6 | Փայտե դռների քանդում | մ² | 55.60 | 1000 | 55600 |
| 7 | Առաստաղի գաջե սվաղի քանդում | մ2 | 163.9 | 300 | 49170 |
| 8 | Առաստաղի ցեմենտավազե սվաղի քանդում | մ2 | 25.4 | 300 | 7620 |
| 9 | Պատերի գաջե սվաղի մաքրում | մ² | 382.0 | 300 | 114600 |
| 10 | Պատերի ցեմենտավազե սվաղի քանդում | մ2 | 109.1 | 300 | 32730 |
| 11 | Ց/ավազե հարթեցնող շերտի քանդում 30մմ հաստ | մ3 | 17.76 | 12000 | 213120 |
| 12 | Շին. աղբի բարձում և տեղափոխում 13կմ հեռ.վրա | տ | 104.4 | 7000 | 730800 |
| | **Ընդամենը 1-1** | | | | **1804640** |
| | **1-2. Շինարարական աշխատանքներ** | | | | |
| 1 | Միջնորմի իրականացում h=100մմ բլոկներով | մ² | 14.4 | 5200 | 74880 |
| 2 | 50սմ հաստությամբ դռան բացվածքի փակում | մ³ | 0.95 | 30000 | 28500 |
| 3 | Պատի երեսապատում ֆելզիտ տուֆի սալիկներով | մ² | 1.9 | 18000 | 34200 |
| 4 | Բակային մասի պատի երեսապատում բազալտե սալիկներով | մ² | 30.0 | 18000 | 540000 |
| 5 | Առաստաղի գաջե սվաղում, բարելավված որակի | մ2 | 163.90 | 2600 | 426140 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Առաստաղի սվաղում ցեմ/ավազային սվաղով | մ2 | 25.40 | 3000 | 76200 |
| 7 | Առաստաղի ներկում լատեքսային ներկով | մ² | 548.35 | 2000 | 1096700 |
| 8 | Պատերի նոր գաջե սվաղում բարելավված որոկի | մ² | 16.20 | 2600 | 42120 |
| 9 | Պատերի նոր ց/ավազե սվաղում | մ² | 12.6 | 3000 | 37800 |
| 10 | Պատերի գաջե սվաղի վերանորոգում բարելավված որոկի | մ² | 382.0 | 2600 | 993200 |
| 11 | Պատերի ներկում լատեքսային ներկով | մ² | 1273.2 | 2000 | 2546400 |
| 12 | Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում, հիմնակմախքի պատրաստումով | մ² | 23.40 | 6500 | 152100 |
| 13 | Պրեսգրանիտե շրիշակների իրականացում | մ² | 13.04 | 1500 | 19560 |
| 14 | Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով | մ² | 121.82 | 10500 | 1279110 |
| 15 | Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում | մ² | 78.5 | 4400 | 345400 |
| 16 | Շեպերի ներկում լատեքսային ներկով | մ² | 78.50 | 2400 | 188400 |
| 17 | Մետաղապլաստե պատուհաններ, տեղադրումով, կաղնեգույն բացվող փեղկով | մ² | 65.01 | 50000 | 3250500 |
| 18 | Մետաղապլաստե պատուհաններ, տեղադրումով, ոսկեգույն կաղնե բացվող փեղկով | մ² | 2.04 | 50000 | 102000 |
| 19 | Վիտրաժի տեղադրում, կաղնեգույն | մ² | 25.37 | 40000 | 1014800 |
| 20 | Մետաղապլաստե դռների տեղադրում, կաղնեգույն | մ² | 51.56 | 55000 | 2835800 |
| 21 | Մուտքի այումինե դռներ, ջերմակամրջակով | մ² | 7.65 | 100000 | 765000 |
| 22 | Պլաստիկ պատուհանագոգեր կաղնեգույն (b=35սմ ) արժեքը | մ | 42.5 | 6000 | 255000 |
| 23 | Պատուհաններին տեղադրել դրսի կողմից ցինկապատ պատուհանագոգ 0,55մմ հաստ | մ² | 13.0 | 5000 | 65000 |
| 24 | Հատակի իրականացում 400x400մմ չափերի պրեսգրանիտից | մ² | 163.80 | 10800 | 1769040 |
| 25 | Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ | մ² | 163.80 | 3000 | 491400 |
| 26 | Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով | մ² | 163.80 | 2400 | 393120 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27 | Լամինատե ծածկույթի իրականացում 7մմ հաստ (պարալոնի շերտի տեղադրումով) | մ2 | 392.3 | 7000 | 2746100 |
| 28 | Ցեմենտավազային հարթեցնող d=50մմ շերտի պատրաստում հատակների տակ | մ² | 392.30 | 3500 | 1373050 |
| 29 | Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով | մ² | 392.30 | 2400 | 941520 |
| 30 | Հարթակը երեսապատել բազալտե սալիկներով d=30մմ | մ² | 26.50 | 18000 | 477000 |
| 31 | Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ | մ² | 26.50 | 3000 | 79500 |
| 32 | Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով | մ² | 26.50 | 2400 | 63600 |
| 33 | Աստիճանավանդակի երեսապատում 400x400մմ չափերի պրեսգրանիտից | մ² | 15.60 | 18000 | 280800 |
| 34 | Ցեմենտավազային հարթեցնող d=20մմ շերտի պատրաստում հատակների տակ | մ² | 15.60 | 3000 | 46800 |
| | **Ընդամենը 1-2** | | | | **24830740** |
| | ***1-3. Էլեկտրական լուսավորություն*** | | | | |
| 1 | Լուսավորության վահանակ մուտքային - 60Ա եռաֆազ, խմբային 10x25Ա միաֆազ ավտոմատ անջատիչներով | լրակ. | 2 | 40000 | 80000 |
| 2 | Լուսատու առաստաղային լուսադիոդային լամպերով 20Վտ, | լրակ. | 24 | 12000 | 288000 |
| 3 | Լուսատու առաստաղային լուսադիոդային լամպերով 2x11Վտ, | լրակ. | 79 | 8000 | 632000 |
| 4 | Լուսատու առաստաղային լուսադիոդային լամպերով 1x11Վտ, | լրակ. | 10 | 7000 | 70000 |
| 5 | Լուսատու պատի լուսադիոդային լամպերով 1x11Վտ, | լրակ. | 4 | 7000 | 28000 |
| 6 | Երկտեղանի վարդակ - 230Վ, 16Ա հողանցումով | հատ | 40 | 1500 | 60000 |
| 7 | Վարդակ հողանցման հպակով,220Վ, 16Ա | հատ | 60 | 1200 | 72000 |
| 8 | Միաբևեռ անջատիչ 10Ա փակ լարանցման | հատ | 15 | 1500 | 22500 |
| 9 | Երկբևեռ անջատիչ 16Ա փակ լարանցման | հատ | 28 | 1800 | 50400 |
| 10 | Տուփ վարդակների և անջատիչների տեղադրման համար | հատ | 145 | 100 | 14500 |
| 11 | Տուփ բաժանարար | հատ | 100 | 500 | 50000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ2x2,5մմ², տեղադրումով | մ | 2150 | 800 | 1720000 |
| 13 | Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՎ1x2,5մմ², տեղադրումով | մ | 2150 | 500 | 1075000 |
| 14 | Ճկախողովակ Ø25մմ | մ | 1500 | 300 | 450000 |
| 15 | Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x16մմ² ՎՎԳ | մ | 30.0 | 1000 | 30000 |
| 16 | Լուսադիոդային լուսատու վթարային 1x7Վտ,Exit նշանով | հատ | 8 | 15000 | 120000 |
| | **Ընդամենը 1-3** | | | | **4762400** |
| | ***1-4. Ջեռուցում, Օդափոխություն*** | | | | |
| | *Ջեռուցում* | | | | |
| 1 | Այումինե ջեռուցման սարքեր տեղադրումով 0.15կՎտ H=0.5մ, ΔT=50 (420 սեկցիա) | էքմ | 117.6 | 3000 | 352800 |
| 2 | Այումինե լավորակ մարտկոցների արժեքը | սեկցիա | 420 | 5500 | 2310000 |
| 3 | Պոլիպրոպիլենե խողովակ այումինե շերտով, տաք ջրի համար Φ 50x8,3 փորձարկումով | մ | 31.0 | 5000 | 155000 |
| 4 | Պոլիպրոպիլենե խողովակ այումինե շերտով, տաք ջրի համար Φ 40x6,7 փորձարկումով | մ | 51.0 | 4000 | 204000 |
| 5 | Պոլիպրոպիլենե խողովակ այումինե շերտով, տաք ջրի համար Φ32x5,4 փորձարկումով | մ | 38.0 | 3200 | 121600 |
| 6 | Պոլիպրոպիլենե խողովակ այումինե շերտով,տաք ջրի համար Φ25x4,2 փորձարկումով | մ | 41.0 | 2500 | 102500 |
| 7 | Պոլիպրոպիլենե խողովակ այումինե շերտով,տաք ջրի համար Φ 20x3,4 փորձարկումով | մ | 208.0 | 2200 | 457600 |
| 8 | Ցանցի փորձարկում | մ | 369.0 | 300 | 110700 |
| 9 | Փական Φ15 տեղադրումով | հատ | 40 | 3000 | 120000 |
| 10 | Փական Φ25, տեղադրումով | հատ | 2 | 3200 | 6400 |
| 11 | Փական Φ32, տեղադրումով | հատ | 2 | 4000 | 8000 |
| 12 | Ջեռուցման սարքի միացման կեռեր | հատ | 86 | 2000 | 172000 |
| 13 | Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր | հատ | 140 | 500 | 70000 |
| 14 | Խողովակների ամրացման կեռեր | հատ | 130 | 300 | 39000 |
| 15 | Փական օդահեռացման Φ 15, տեղադրումով | հատ | 40 | 2000 | 80000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16 | Փական ջերմակարգավորիչ սարքի մոտ Φ15 տեղադրումով | հատ | 40 | 16000 | 640000 |
| 17 | Միջհարկային ծածկերում, պատերում և միջնապատերում անցքերի բացում - 28տեղ | մ³ | 0.46 | 100000 | 46000 |
| | *Օդի արտածման համակարգ* | | | | |
| 18 | Օդատար ցինկապատ թիթեղից | մ² | 19.0 | 8000 | 152000 |
| 19 | Օդատար ճաղավանդակ Р150, տեղադրումով | հատ | 4 | 3500 | 14000 |
| 20 | Միջհարկային ծածկերում, պատերում և միջնապատերում անցքերի բացում - 4տեղ | մ³ | 0.060 | 100000 | 6000 |
| 21 | Հովանոց ցինկապատ թիթեղից 500x300 | հատ | 1 | 2000 | 2000 |
| | **Ընդամենը 1-4** | | | | **5169600** |
| | ***1-5. Կաթսաների սարքավորումներ*** | | | | |
| 1 | Ջրատաքացուցիչ կաթսա N36կվ/ժ | հատ | 2 | 830000 | 1660000 |
| 2 | Շրջանառության պոմպ H=12մ, G=5մ³ /ժամ տեղադրումով | հատ | 2 | 20000 | 40000 |
| 3 | Ծխնելույզ Φ100 H=3,0 մ | տն | 0.033 | 200000 | 6600 |
| 4 | Օդատար ցինկապատ պողպատից, Φ150 H=3,0մ | մ² | 1.4 | 10000 | 14000 |
| 5 | Ջրի մշակման էլեկտրամագնիսական սարք | հատ | 1 | 19980 | 19980 |
| 6 | Օդատար ճաղավանդակ Р150, տեղադրումով | հատ | 4 | 5000 | 20000 |
| 7 | Փական դատարկման Φ 15, տեղադրումով | հատ | 2 | 5000 | 10000 |
| 8 | Պողպատե խողովակ Φ20մմ, փորձարկումով | մ | 6.0 | 6000 | 36000 |
| 9 | Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով, տաք ջրի համար Φ 50x8,3 փորձարկումով | մ | 5.0 | 15000 | 75000 |
| 10 | Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով, տաք ջրի համար Φ40x6,7 փորձարկումով | մ | 8.0 | 12000 | 96000 |
| 11 | Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով,տաք ջրի համար Φ25x4,2 փորձարկումով | մ | 6.0 | 10000 | 60000 |
| 12 | Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով,տաք ջրի համար Φ20x3,4 փորձարկումով | մ | 10.0 | 8000 | 80000 |
| 13 | Ցանցի փորձարկում | մ | 35.0 | 2000 | 70000 |
| 14 | Սողնակ թիթեռնիկավոր Φ40 տեղադրումով | հատ | 2 | 40000 | 80000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | Սողնակ թիթեռնիկավոր Φ32 տեղադրումով | հատ | 2 | 20000 | 40000 |
| 16 | Սողնակ թիթեռնիկավոր Φ25 տեղադրումով | հատ | 6 | 10000 | 60000 |
| 17 | Սողնակ թիթեռնիկավոր Φ15 տեղադրումով | հատ | 2 | 6000 | 12000 |
| 18 | Ճնշաչափի տեղադրում | հատ | 2 | 8000 | 16000 |
| 19 | Հետադարձ փական Φ25 տեղադրումով | հատ | 2 | 6000 | 12000 |
| 20 | Կոյուղու պլաստմասե խողովակ Φ50, փորձարկումով, մոնտաժումով | մ | 2 | 2000 | 4000 |
| | **Ընդամենը 1-5** | | | | **2411580** |
| | ***1-6. Գազամատակարարում*** | | | | |
| 1 | Պողպատե (St) DN25x3,0 էլ. եռակցվող ջրագազատար անկար խողովակների մոնտաժում փորձարկումով | մ | 4.0 | 15000 | 60000 |
| 2 | Պողպատե (St) DN20x3,0 էլ. եռակցվող ջրագազատար անկար խողովակների մոնտաժում փորձարկումով | մ | 3.0 | 10000 | 30000 |
| 3 | Խողովակների փչամաքրում | մ | 7.0 | 2000 | 14000 |
| 4 | Գնդային փական DN25մմ, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 8000 | 8000 |
| 5 | Գնդային փական DN20մմ, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 5000 | 10000 |
| 6 | DN25 էլ. մագնիսական կափույրի մոնտաժում | հատ | 1 | 35000 | 35000 |
| 7 | Ազդանշանային սարքի մոնտաժում | լրակ | 1 | 50000 | 50000 |
| | **Ընդամենը 1-6** | | | | **207000** |
| | ***1-7. Ջրամատակարարման ցանց*** | | | | |
| 1 | Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ25x2,3,փորձարկումով | մ | 3.0 | 4000 | 12000 |
| 2 | Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ20x2, փորձարկումով | մ | 26.0 | 3500 | 91000 |
| 3 | Լվացարանի ծորակ | հատ | 5 | 8000 | 40000 |
| 4 | Համակարգի լվացում և ախտահանում | մ | 29.0 | 1000 | 29000 |
| 5 | Միացում գոյություն ունեցող Φ20մմ գծին | տեղ | 1 | 5000 | 5000 |
| 6 | Փականի տեղադրում DN15 | հատ | 7 | 2000 | 14000 |
| 7 | Փականի տեղադրում DN20 | հատ | 1 | 3000 | 3000 |
| 8 | Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ25-20 | հատ | 8 | 500 | 4000 |
| | **Ընդամենը 1-7** | | | | **198000** |
| | ***1-8. Կոյուղու ցանց*** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով | մ | 30.0 | 1400 | 42000 |
| 2 | Պոլիվինիքլորիդ խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով | մ | 5.0 | 1000 | 5000 |
| 3 | Խեցե զուգարանակոնք | կ-տ | 5 | 35000 | 175000 |
| 4 | Խեցե լվացարան | կ-տ | 5 | 25000 | 125000 |
| 5 | Մաքրիչ d=100մմ | հատ | 1 | 4000 | 4000 |
| 6 | Միացում գոյություն ունեցող Φ100մմ գծին | տեղ | 1 | 5000 | 5000 |
| 7 | Ստուգիչ d=100մմ | հատ | 1 | 4000 | 4000 |
| 8 | Պոլիվինիքլորիդ խողովակների ձևավոր մասեր d=110-50մմ | հատ | 23 | 800 | 18400 |
| 9 | Հատակի քանդում 200x200-10մ | մ³ | 0.40 | 20000 | 8000 |
| 10 | Հատակի վերականգնում 200x200-10մ | մ³ | 0.40 | 25000 | 10000 |
| | **Ընդամենը 1-8** | | | | **396400** |
| | Ընդամենը 1-1-ից 1-8 | | | | **39780360** |
| | ***Այդ թվում սարքավորումներ*** | | | | 1719980 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ք. Երևան, Տիգրան Մեծի 50** հասցեում:

** Միավոր արժեքի մեջ հաշվարկած է՝ բոլոր ծախսերը, շահույթը և ԱԱՀ 20%:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.պաշտ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011035988**
**ԱՎՀՀ 02506634**

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Երկնաքեր ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա**
**ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ**
**Հ/Հ 1550010011101194**
**ՀՎՀՀ 00414165**

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» հոկտեմբերի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N. | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԱՇՎԱԾ /ԸՆԴԱՄՆԵԼԸ 60 ՕՐ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3օր | 5օր | 5օր | 5օր | 5օր | 5օր | 5օր | 4օր | 4օր | 4օր | 5օր | 5օր | 5օր |
| 1. | ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | | | | | | | | | | | | |
| 2. | ՀԱՏԱԿՆԵՐԻ ՔԱՆԴՈՒՄ, ԴՈՆԵՐԻ և ՊԱՏ-ՆԵՐԻ ԴԵՄՈՆՏԱԺ | | | | | | | | | | | | | |
| 3. | ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԴԵՄՈՆՏԱԺՈՒՄ | | | | | | | | | | | | | |
| 4. | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ՄՈՆՏԱԺ | | | | | | | | | | | | | |
| 5. | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ՄՈՆՏԱԺ | | | | | | | | | | | | | |
| 6. | ԴՈՆԵՐԻ և ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ | | | | | | | | | | | | | |
| 7. | ՀԱՏԱԿՆԵՐԻ և ԳԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | |
| 8. | ՍԱՌԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | |
| 9. | ԱՐՏԱՔԻՆ ՍԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՍԱՌԿԱՊԱՏՈՒՄ | | | | | | | | | | | | | |
| 10. | ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | |
| 11. | ՇԻՆ, ՍՂԲԻ ՀԱՎԱՔՈՒՄ, ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | | | | | | | | | | | | | |

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 60 ՕՐ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011035988**
**ՀՎՀՀ 02506634**

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Երկնաքեր ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա**
**ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ**
**Հ/Հ 1150010011101194**
**ՀՎՀՀ 00414165**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«29» հոկտեմբերի 2020 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՀՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611300/3 | ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 39780360.0 | 39780360.0 | 39780360.0 | **39780360.0** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180031**
**ՀՎՀՀ 02506634**

/ստորագրություն/
Կ.Տ

## ԿԱՊԱԼԱՌՈՒ

**Երկնաքեր ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա**
**«ՀԱՅՐԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1150010011101194**
**ՀՎՀՀ 00414165**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«29» հոկտեմբերի 2020 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՀՄԱԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«29» հոկտեմբերի 2020 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՀՄԱԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն